# Հարկեր

## *1. Ուղղակի հարկեր*

**Ներածություն**

Ուղղակի հարկերի բնագավառում ՀՀ օրենսդրությունը մասամբ համահունչ է ԵՄ օրենսդրությանը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հիմնական սկզբունքները համապատասխանում են ԵՄ դիրեկտիվների դրույթներին: Սակայն ԵՄ հարկերի մասին օրենսդրությունը հիմնականում կարգավորում է դուստր և գերիշխող ընկերությունների շահութահարկով միասնական հարկման առանձնահատկությունները, որոնք չեն կարգավորվում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով Անհամապատասխանություններ կան նաև հարկային գործակալների իրավունքների և պարտականությունների շրջանակների որոշման առումով: Մասնավորապես, հրահանգներում հարկային գործակալի իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանված է ավելի լայն, քան «Եկամտահարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2009 թվականը «Ուղղակի հարկեր» ենթագլուխը մասամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2009 թվական**

Ուղղակի հարկերին վերաբերող ՀՀ օրենսդրությունը ԵՄ համապատասխան օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Եկամտահարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներում, որոնց համար հիմք կծառայեն 2003թ. հունիսի 3-ի թիվ 48 և 1990թ. հուլիսի 23-ի թիվ 435 ԵՀ դիրեկտիվները:

***1.1.Օրենսդրական համապատասխանեցում***

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2009* | | | | | | |
| 1. | «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2003թ. հունիսի 3-ի «Շահաբաժիններից ստացվող եկամտի հարկման մասին» Խորհրդի թիվ 48 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 27 | Նախնական փորձաքննություն |
| 2. | «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1990թ. հուլիսի 23-ի «Մայր և կախյալ ընկերությունների ընդհանուր հարկման մասին» Խորհրդի թիվ 435 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայութան մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 15 | Նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 42 | |

*1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ*[1]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | - | ԵՄ-ում շահաբաժիններից ստացվող եկամուտի հարկման վերաբերյալ դասընթաց (2օր / 2009թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 2. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | - | ԵՄ-ում մայր և կախյալ ձեռնարկությունների ընդհանուր հարկման վերաբերյալ դասընթաց (2 օր / 2009թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |

[1] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## *2 . Անուղղակի հարկեր*

**Ներածություն**

Անուղղակի հարկերի բնագավառում ՀՀ օրենսդրությունը մասամբ է համապատասխանում ԵՄ օրենսդրությանը:

ԵՄ դիրեկտիվների մեծ մասն ուղղված է համապատասխանեցնելու ԵՄ անդամ պետությունների կողմից իրականացվող անուղղակի հարկումը, այսինքն՝ ավելացված արժեքի և ակցիզային հարկերի մասին օրենսդրությունը: Վերոհիշյալ հիմնախնդիրները ՀՀ-ում կարգավորում են «Ավելացված արժեքի հարկի մասին»[2], «Ակցիզային հարկի մասին»[3], «Գույքահարկի մասին»[4], «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին»[5] ՀՀ օրենքները, այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ավելացված արժեքի հարկատեսակի իրավական կարգավորման բնագավառում առկա է գրեթե ամբողջական համապատասխանություն: Սակայն ԵՄ ավելացված արժեքի հարկի մասին օրենսդրական ակտերում[6] զետեղված մանրամասնությունները արտացոլված չեն ՀՀ համապատասխան օրենքում: ԵՄ ավելացված արժեքի հարկի մասին օրենսդրական ակտերի որոշակի նորմերն ընդհանրապես արտացոլված չեն «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքում:Մասնավորապես, ԵՄ օրենսդրությունում ավելացված արժեքի հարկ վճարողները տարանջատված են ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների, ինչն սակայն բացակայում է «Ավելացված արժեքի հարկի» Հայաստանի Հանրապետության օրենքում:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթները հիմնականում համապատասխանում են ԵՄ դիրեկտիվներով սահմանված նորմերին: Համընկնում է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկը և դրոշմավորման ընթացակարգը: Միաժամանակ, «Ակցիզային հարկի մասին» օրենքը չունի որոշակի հասկացություններ, որոնք սահմանված են ԵՄ դիրեկտիվով, օրինակ՝ ակցիզային գործակալի կամ ակցիզային պահեստի և պահեստապետի հասկացությունները[7]: «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքը արտոնություններ է սահմանում  ավելի քիչ քանակի ապրանքների համար: Չի համապատասխանում նաև արտոնություններով, այսինքն՝ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերից ներմուծված ապրանքների ընդհանուր գումարի չափը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2009 թվականը «Անուղղակի հարկեր» ենթագլուխը գրեթե ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2007 թվական**

Բենզինի և կերոսինի ֆիսկալ տարբերանշանների հետ կապված հարցերի լուծման նպատակով ՀՀ կառավարությունը կմշակի որոշման նախագիծ՝  համապատասխան 1992թ. հոկտեմբերի 19-ի թիվ 84 ԵՀ դիրեկտիվի դրույթներին:

Որոշակի տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման, ինչպես նաև քաղաքացիների անձնական սեփականության մշտական ներմուծման հիմնախնդիրներն առավել արդյունավետ կկարգավորվեն՝ ՀՀ մաքսային օրենսգրքում և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով: Վերջիններս կբխեն 1983թ. մարտի 28-ի թիվ 182 դիրեկտիվի սկզբունքներից:

Ներմուծված ոչ առևտրային նշանակություն ունեցող ապրանքների նկատմամբ հարկային արտոնությունների հետ կապված հիմնախնդիրների կարգավորման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ մաքսային օրենսգրքում, «Ավելացված հարկի մասին» և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքներում: Այդ նորմատիվ իրավական ակտերը կհամապատասխանեցվեն 1978թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1035 դիրեկտիվի հիմնադրույթներին:

Բեռնատար տրանսպորտի հարկման գործընթացի արդյունավետ կարգավորման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում, որի համար հիմք կծառայի 1999թ. հունիսի 17-ի թիվ 63 ԵՀ դիրեկտիվը:

Ծխախոտի արտադրանքի վրա կիրառվող հարկերի և ալկոհոլի ու ալկոհոլային խմիչքների վրա կիրառվող ակցիզային հարկերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ԵՄ իրավական դրույթներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կիրականացվեն «Ակցիզային հարկի մասին» և «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ

---

[2] ՀՕ-118, 14.05.1997թ.:
[3] ՀՕ-79, 07.07.2000թ.:
[4] ՀՕ-491, 26.12.2002թ.:
[5] ՀՕ-40, 24.03.2000թ.:
[6] 1983թ. մարտի 28-ի Խորհրդի հրահանգ թիվ 83/181՝ «Որոշակի ապրանքների վերջնական ներմուծման վրա  ավելացված արժեքի հարկից ազատման թիվ 77/388 Հրահանգի 14(1) Հոդվածի շրջանակները սահմանելու մասին»:
[7] 1992թ. փետրվարի 25-ի Խորհրդի հրահանգ թիվ 92/12՝ «Ակցիզային հարկի օբյեկտ հանդիսացող ապրանքների պահեստավորման, տեղաշարժման և վերահսկման նկատմամբ ընդհանուր ընթացակարգերի մասին»:

օրենքներում՝ հիմք ընդունելով 1992թ. հոկտեմբերի 19-ի թիվ 79, 80, 83, 84 ԵՀ դիրեկտիվները և 1995թ. նոյեմբերի 27-ի թիվ 59 դիրեկտիվը:

**2008 թվական**

Նշված ժամանակահատվածում նախատեսվում է ՀՀ և ԵՄ ավելացված արժեքի հարկին վերաբերող օրենսդրության ներդաշնակեցումը ԵՄ չափանիշներին: Այդ նպատակով համապատասխան փոփոխություններ և լրացումներ կիրականացվեն ՀՀ մաքսային օրենսգրքում և «Ավելացված հարկի մասին» ՀՀ օրենքում: Որպես օրենսդրական համապատասխանության հիմք կհանդիսանան 1977թ. մարտի 17-ի թիվ 6, 1967թ. ապրիլի 11-ի թիվ 227, 1986թ. նոյեմբերի 17-ի թիվ 560, 1999թ. հոկտեմբերի 22-ի թիվ 85, 1994թ. փետրվարի 14-ի թիվ 5, 2002թ. մայիսի 7-ի թիվ 38, 1983թ. մարտի 18-ի, 1998թ. հոկտեմբերի 12-ի թիվ 80, 1979թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1072 դիրեկտիվները:

Ակցիզային հարկի օրենսդրության արդյունավետ կիրարկման համատեքստում կարևորվում է ՀՀ մաքսային օրենսգրքում, «Հարկերի մասին» և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքներում կատարվելիք փոփոխությունները և լրացումները, որոնք համահունչ կլինեն 1992թ. փետրվարի 25-ի թիվ 12 և 1969թ. մայիսի 28-ի դիրեկտիվների սկզբունքներին:

**2009 թվական**

Ընկերությունների կանոնադրական կապիտալի ավելացման հարկման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և էներգապապրանքների հարկման հիմնախնդիրները արդյունավետ լուծելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքում՝ հիմնվելով 1969թ. հուլիսի 17-ի թիվ 335 և 2003թ. հոկտեմբերի 27-ի թիվ 96 դիրեկտիվների սկզբունքների վրա:

## *2.1. Օրենսդրական համապատասխանեցում և իրագործում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN p/կ | Միջոցառում[8][9] | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման[10] ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2007* | | | | | | |
| 1. | «Բենզինի և կերոսինի ֆիսկալ տարբերանշման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 1992թ. հոկտեմբերի 19-ի «Բենզինի և կերոսինի ֆիսկալ տարբերանշման վերաբերյալ» Խորհրդի թիվ 84 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 15 | Նախնական փորձաքննություն |
| 2. | • «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1983թ. մարտի 28-ի «Որոշակի տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման դեպքում հարկային արտոնություններ սահմանելու մասին» Խորհրդի թիվ 182 դիրեկտիվ<br><br>1983թ. մարտի 28-ի «Քաղաքացիների անձնական սեփականության մշտական ներմուծման դեպքում հարկային արտոնությունների սահմանելու մասին» Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 30 | Նախնական փորձաքննություն |
| 3. | • « ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի | 1978թ. դեկտեմբերի 19-ի «Ներմուծված ոչ-առևտրային նշանակություն ունեցող | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2-րդ եռամսյակ | 15 | Նախնական փորձաքննություն |

[8] Յուրաքանչյուր իրավական ակտում ՀՀ կառավարությունը նախատեսել է անցումային դրույթներ՝ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետների վերաբերյալ:
[9] Իրավական ակտի նախագծին կից ներկայացվող տեղեկանքում նախարարությունը ներկայացնում է դրա կիրառման նպատակահարմարության և հնարավոր հետևանքների վերաբերյալ իր նկատառումները:
[10] Սյունակում նշված ժամկետը վերաբերվում է համապատասխան իրավական ակտը ներկայացնելու ժամկետին:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախագծի մշակում<br>• «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում,<br>• «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | ապրանքների նկատմամբ հարկային արտոնություններ սահմանելու մասին» Խորհրդի թիվ 1035 դիրեկտիվ | (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ) | | | |
| 4. | • «Ճանապարհային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1999թ. հունիսի 17-ի «Բեռնատար տրանսպորտի հարկման մասին» Եվրոպական պառլամենտի թիվ 62 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 18 | Նախնական փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | • «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1992թ. հոկտեմբերի 19-ի «Սիգարետի վրա կիրառվող հարկերի մոտարկման վերաբերյալ» Խորհրդի թիվ 79 դիրեկտիվ<br><br>1992թ. հոկտեմբերի 19-ի «Ալկոհոլի և ալկոհոլային խմիչքների վրա կիրառվող ակցիզային հարկի կառուցվածքի համոնիզացման վերաբերյալ» Խորհրդի թիվ 83 դիրեկտիվ<br><br>1992թ. հոկտեմբերի 19-ի «Սիգարետից բացի վերամշակված ծխախոտի այլ արտադրանքների վրա կիրառվող հարկերի մոտարկման վերաբերյալ» Խորհրդի թիվ 80 դիրեկտիվ<br><br>1992թ. հոկտեմբերի 19-ի «Ալկոհոլի և ալկոհոլային խմիչքների վրա կիրառվող ակցիզային հարկի դրույքաչափերի մոտարկման վերաբերյալ» Խորհրդի թիվ 84 դիրեկտիվ<br><br>1995թ. նոյեմբերի 27-ի «Ծխախոտի արտադրանքի նկատմամբ ԱԱՀ-ից բացի այլ հարկատեսակներ սահմանելու մասին» Խորհրդի թիվ 59 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 66 | Նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 144 | |
| *2008* | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | • «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1977թ. մարտի 17-ի «Անդամ երկրների ավելացված արժեքի հարկի մասին օրենսդրության ներդաշնակեցման մասին՝ ԱԱՀ-ի ընդհանուր համակարգը.գնահատման միասնական հիմք» Խորհրդի 6-րդ դիրեկտիվ<br><br>1967թ. ապրիլի 11-ի «Անդամ երկրների ԱԱՀ-ի մասին օրենսդրության ներդաշնակեցման մասին» Խորհրդի թիվ 227 դիրեկտիվ<br><br>1986թ. նոյեմբերի 17-ի «Ոչ ռեզիդենտ հարկատուներին ԱԱՀ-ի գումարի վերադարձման մասին» Խորհրդի թիվ 560 դիրեկտիվ<br><br>1999թ. հոկտեմբերի 22-ի «Աշխատատար ծառայությունների նկատմամբ ԱԱՀ-ի դրույքաչափերի իջեցման մասին» Խորհրդի թիվ 85 դիրեկտիվ<br><br>1994թ. փետրվարի 14-ի «ԱԱՀ-ի ընդհանուր համակարգը լրացնող և ԵՄ թիվ 77/388/EEC դիրեկտիվը փոփոխող՝ հնաոճ իրերի, հավաքածուների և նախկինում օգտագործած իրերի նկատմամբ հատուկ ընթացակարգ սահմանելու մասին» Խորհրդի թիվ 5 դիրեկտիվ<br><br>2002թ. մայիսի 7-ի «Ռադիոյի | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 280 | Նախնական փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | և հեռուստատեսության հեռարձակման , ինչպես նաև այլ էլեկտրոնային ծառայությունների ԱԱՀ-ով հարկման մասին» Խորհրդի թիվ 38 դիրեկտիվ<br><br>1983թ. մարտի 18-ի «Որոշակի ապրանքների ներմուծումը ԱԱՀ-ից ազատելու մասին» Խորհրդի դիրեկտիվ<br><br>1998թ. հոկտեմբերի 12-ի «ԱԱՀ-ի ընդհանուր համակարգը լրացնող և ԵՄ 77/388EEC դիրեկտիվը փոփոխող, ներդրման ոսկու համար հատուկ սխեմային կիրառման մասին» Խորհրդի N 80 դիրեկտիվ<br>Անդամ երկրների ԱԱՀ-ի օրենսդրության ներդաշնակեցման` ԱԱՀ-ի գումարի ոչ-ռեզիդենտներին վերադարձնելու մասին Խորհրդի 1979թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1072 դիրեկտիվ | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | • «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Ակցիզային հարկի մահսն» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1992թ. փետրվարի 25-ի «Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ընդհանուր ընթացակարգերի, ինչպես նաև այդ ապրանքների պահեստավորման, շարժման և վերահսկման մասին» Խորհրդի թիվ 12 դիրեկտիվ<br><br>1969թ. մայիսի 28-ի «Միջազգային փոխադրումների ժամանակ ներմուծված ապրանքների ԱԱՀ-ից և ակցիզային հարկից ազատման մասին» Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 75 | Նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 355 | |
| *2009* | | | | | | |
| 8. | • «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1969թ. հուլիսի 17-ի «Ընկերությունների կանոնադրական կապիտալի ավելացումը հարկելու մասին» Խորհրդի թիվ 335 դիրեկտիվ<br><br>2003թ. հոկտեմբերի 27-ի «Էլեկտրաէներգիայի և էներգաապրանքների հարկման մասին» Խորհրդի թիվ 96 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության մասնակցությամբ) | 1-ին եռամսյակ | 60 | Նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 60 | |

*2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*[11]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN p/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն<br>ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե | - | ԵՄ-ում վառելիքի ֆիսկալ տարբերանշանների կիրառման վերաբերյալ դասընթաց (1 օր / 2007թ.)<br>ԵՄ-ում քաղաքացիների անձնական սեփականության մշտական ներմուծման դեպքում հարկային արտոնությունների վերաբերյալ դասընթացներ (1 օր / 2007թ.)<br>ԵՄ-ում ներմուծված ոչ առևտրային նշանակություն ունեցող ապրանքների նկատմամբ հարկային արտոնությունների վերաբերյալ դասընթացներ (1 օր / 2007թ)<br>ԵՄ-ում որոշակի տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման դեպքում հարկային արտոնություններ սահմանելու վերաբերյալ դասընթացներ (1օր / 2007թ.)<br>ԵՄ-ում բեռնատար տրանսպորտի հարկման վերաբերյալ դասընթացներ (1օր/2007թ.) | Վերապատրաստում |
| . | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն | - | ԵՄ-ում ծխախոտի արտադրանքի հարկման վերաբերյալ դասընթացներ (2 օր/ 2007թ.)<br>ԵՄ-ում ալկոհոլի հարկման վերաբերյալ դասընթացներ (2 օր/ 2007թ.)<br>ԵՄ-ում ԱԱՀ-ի մասին օրենսդրության վերաբերյալ դասընթացներ (3 օր / 2008թ.)<br>ԵՄ-ում ակցիզային հարկի մասին օրենսդրության վերաբերյալ դասընթացներ (2 օր / 2008թ.)<br>ԵՄ-ում կապիտալի չափի ավելացման հարկման վերաբերյալ դասընթացներ (1 օր / 2009թ.) | Վերապատրաստում |

[11] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ԵՄ-ում էլեկտրաէներգիայի և էներգաապրանքների հարկման վերաբերյալ դասընթացներ (1 օր / 2009թ.) | |